

բայց Հայկական բաժինը մեծ տեղ կը զրաւէ. և կը ստորաբաժանուի : Բանասիրական բաժնին մէջ կ'երեան հետեւալները Հ. Բ. Սարգիսեան «Ծագութն հայ տառից» . — « Սոկրատայ հին թարգմանութեան հրատարակութիւնն և Մովսէս Խորենացի» :

Հ. Ալիշան «Հեղինակ Աղուանից պատմութեան» :

Հ. Յ. Թորոսունան «Ի՞նչ առընչութիւն կայ հին հայազգի Պաւղիկեանց և այժմու կաթողիկեայ Բուլղարաց մէջ» . — «Համառու տեսութիւն Կորեան և իւր զրու-

Հ. Ս. Էփրիկ. «Վանայ ծովակի կղզիներ - Աղթամար» . որ կը շարունակուի նաև 1898ին :

Բացի միարաններէն բանասիրական բաժնոյն կը մասնակցէին նաև Արտաքին յօդուածագիրներ ինչպէս կ. Յ. Բ. Բասմաշիան «Յարաւէզր» . — «Թղթակցութիւն բնեազրաց մասին» . — «Տուպական արձանագրութիւն Մանակերտի» :

Խ. Յովհաննիսեան «Մովսէս Խորենացի ըստ բեւեազիր արձանագրութեանց» . — թրգմ. «Բեւեազիր արձանագրութիւններ Ռուսաց Հայաստանում» ... :

Հ. Յ. Աճառեան «Մովսէս Կաղանկատուացի, բննութիւն անոր գրութեան ժամանակին վերայ» . — Քննութիւն և համեմատութիւն Զէյթունցի աւանդական պատմութեան մը. Գողին պատմութիւնը» . Եւ ուրիշներ՝ որոնց պատասխանած են բազմավէպի Սուրհանդակին :

Պատասխանուած են հետեւալ նիւթերուն «Ազգային մեծ մատենագիր մը» . — Ազգենուս մէջ բառարանաց յաճախութիւն . — Անուանց հայկ. ամսոց . — Աշխարհաբարի և գրարարի ինդիր . — Խոյր կամ միտր . — Տառադարձութեան խնդիր» :

Խոկ թովմաս Թերզեան կը սկսի իր մէկ հրաշալի գործը «Գիշեցկագիտութիւն» որ և կը շարունակուի յաջորդ տարին :

Հ. Մ. Պոտուրնաց արայարելի



Հ. Մ. Պոտուրնաց

թեան վերայ» . — «Թատրոն առ նախնի հայս» . — «Նկարչութիւն և ճարտարապետութիւն մեր նախնեաց ժամանակ» . — «Քրիստոսի ծննդեան տօնն ըստ սովորութեան հայկ. եկեղեցւոյ» (Հոն՝ և Հացունին Հ. Վ.) . — Եւ թարգմանութիւն Գելզերի «Դիցարանութիւն Հայոց»ին :

Հ. Վ. Հացունի «Երբ ո, լո, չ, և եր չի» . — «Հայկական եկեղեցւոյ երգերն» . — « Եարականը (Եիրառութիւն յեկեղ. հայ.) , «Տարւոյն երկոտասան ամսոց անուանը» . — Ուղղագրութիւն չ ժխտականին, վերայ բառին և յ զրոյն առնախնիս» :

Ուրիշ բան է զորովանը՝ ուրիշ բան է բարերարինը . (Թոմազէոյ) :

Պարագ կատարէ և մի՛ վախեր :

Մարդ դիւրաւ կը միտ չարութեան կողմը և գծուարաւ կը հետեւի բարեւ :

Հոգին ուրբ չի մօնար այն տունը՝ ուր կուր, խովութիւն և ատելութիւն կայ . (Ս. Ֆր. Ա.) :

Անկեղծ մարգը՝ սկի է :

Գիտուն և Աստուածալաշտ անձը՝ աղամանդ է :

Ուրախ զուարթ երեկոյթին՝ տխուր առաւոտ կը յաջորդէ . (Թովմ. Գեմբ) :

Կոպտութիւնը՝ աւելի տպառութիւն է, քան թէ հպարտութիւն :

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ՕԳՌԱՏՈՍԻ, ՏԵՐԵՐԻ ԵԽ ԵՆԻՐՈՒ ԺԱՄԱՆԱԿ
ԸՍՏ ՏԱԿԻՏՈՍԻ

Հայոց Միհրդատ թագաւորն կղողեայ խորհրդով դարձաւ զերստին թագաւորելու Հայոց վրայ՝ իր եղբօր Փարսման՝ Վրաց թագաւորին օգնութեամբն: Պարթեց տաղակացան խուսարզայ անզթութիւններէն: Այս սպաննեց Արտաւան եղբայրը, անոր կինը և որդին: Հրաւիրեցին քաջայանդուգ այրն Վարդան, որ երկու աւուր մէջ կտրեց երեք հազար ասպարէզ և հասաւ խուսարզայ վրայ, հալածեց զինքը, տիրեց ամբողջ գաւառին րաց ի Սելևկիացիներէ, որոնք իր հօրմէն ալ ապստամբեր էին, և պաշարեց զԱյելսկիա: Խուսարզ Տայոց և Վրկանաց օգնութեամբ հասաւ, ազատեց քաղաքը պաշարմանէն և Վարդան մեկնեցաւ դէպ ի Բակորիա:

Երբ արևելք այսպէս երկապասկուած էր՝ Միհրդատ հոռվմէական զօրքերով մրտաւ Հայաստան, և նուանեց ամուր բերդը: Փոքր Հայոց կոտիշ արքայն, որուն հետ միացան նախարարներէն ումանց, արգելք եղան ժամանակ մը Միհրդատայ յաղթանակներուն, բայց բռնադատուեցան կայսեր հրովարտակին վրայ խոնարհի և միարանիլ. այսու խաղաղութիւն տիրեց Հայոց մէջ ժամանակ մը:

Պարթեաց զօրավարները չմնացին հանդարտ, միշտ կը տեսնէին իրարու դէմ պատերազմի պատրաստութիւններ: Դեռ կոսի շոփնդն չպայթած, խուսարզ իրազեկ եղաւ գաւաճանութեանց. փութով իմացուց եղբօրը, նիզակակցութիւն կոցին մէջերնին, երդուզնցան դից վրայ պաշտպանել զիրար և զրէմնին լուծել հակառակորդ թշնամիններէն: Խուսարզ և Վարդան այսպէս միացան իրարու հետ և սկըսան արշաւանքնին: Խուսարզ դէպ ի Վրկան իւր ուժերը կեզդոնացուց, Վարդան տիրեց Սելևկիոյ և այլ գաւառներու և պատրաստուեցաւ նուանել Հայերն ալ: Բայց իւր դէմ ունեցաւ Վիրիս Մարտու

Հոռվմէական կուսակալն Ասորւոց վրայ, որ կը սպաննայր լէզգններով յարձակիլ իրեն դէմ թշնամական արշաւանքներուն առաջն առնելու համար: Պարազայներուս փոփոխուելով, Խուսարզ չմնաց Վրկան, այլ յորդորուելով Պարթևներէն զրգուենցաւ Վարդանայ դէմ և զօրքերով հասաւ մինչեւ Երինդ գետայն ափունքը: Վարդան քաջարի յարձակմամբ ջախջախից իր եղբօրը բանակը, հալածական տարաւ զիրենց և նուանեց մինչև Այնդու գետայն եզերը, ուր Տայր կը բաժնուի Արեաց աշխարհէն և ինչը դարձաւ շքեղ յաղթանակով: Եթէ ինչպէս անհարկու էր թշնամեաց, այնչափ սիրելի հանդիսանայր հըպատակներուն՝ իրեն նման թագաւոր մը այլ ևս պիտի չունենային Պարթեաց: Երբ անգամ մը որսի երթալու համար ձի պիտի հեծնէր իր թշնամիններէն նետահար՝ մեռաւ: Պարթեց իննդրեցին թագաւորեցնել խուսարզը կամ Միհրդատը, որ Փրատայ որդին էր: Զօրացաւ խուսարզ, այլ զեղու կեանքով և խստութեամբ ատելի եղաւ Պարթեաց, որով գաղտնաբար խորհեցան թագաւորեցնել տալ կայսեր հրամանով՝ Միհրդատը, ուստի ծածկաբար այս շնորհը խնդրեցին ինքնակալէն:

Պարթեաց հրեշտակներն հասան Հոռվմ և ներկայացան ծերակուտին. իրենց աղերսը մատուցին, խնդրելով՝ որ չնորհուի իրենց թագաւոր Վոնոնի թոռը՝ Փրատայ որդին՝ Միհրդատը: Զիջաւ կղողիս, և երբ պիտի մեկնէր Միհրդատ, տուաւ իրեն խրատս. «մի՛ իրեն տէր ընդ ծառայս, այլ որպէս իշխան ընդ քաղաքացիս առնել իրաւունս և ողորմութիւն»: Յանձնեց Ասորւոց կ. կասիոն կուսակալին, որպէս զի առաջնորդէ իրեն մինչև Եփրատ գետ: Ակրար Արարացուց արցայն, իզաւ՝ Աղփաթենաց թագաւորը միացան Միհրդատայ հետ, և տիրեցին Նինուեի և Արքելայի: Այլ այս միութիւնս չուեց երկար. թողուցին զինքը իզաւ և Ակրար, բռնազատուած կոռւեցաւ խուսարզայ դէմ, կրեց մեծ պարտութիւն և ապագինեցաւ իւր հօրմէ բարերաբալի մը,

որ զինքը մատնեց խուսարզայ: Թէ և սա խնայեց կեանքին, այլ յափտենական նախատանաց համար կորել հրամայեց ա-կանչները:

Խուսարզ մեռնելով՝ Պարթեգ կանչեցին վոնոնը, որ կը կուսակալէր Մարաց վրայ և զինքը թագաւորեցուցին, որուն յաջոր-դեց իւր Վոլոգէս որդին:

Այսպէս բացուեցաւ Հայոց և Վրաց մէջ պատերազմ: Վրաց վրայ կը թագաւորէր Փարսման ըստ օրինի ժառանգութեան. իսկ Հայոց կ'իշխէր Հոռվմէական պաշտպա-նութեամբ Միհրդատ՝ Փարսմանայ եղայ-րը: Փարսման միշտ երկիւղի մէջ էր իւր Հոռամիզդ որդուն բնաւորութեան համար, ուստի հնարեցաւ միջոց մը գտնել իրմէ հեռացնելու զինքը: Ասոր համար խոր-հուրդ տուաւ իրեն թէ ինչպէս կարող պի-տի ըլլար անցնիլ Միհրդատ հօրեղօրը տեղ և Հայոց վրայ թագաւորէլ:

Հոռամիզդ ձևացուց թէ գտուեր է Փարս-ման հօրմէն իրեն մօրուին պատճառաւ, ապաւինեցաւ Միհրդատայ, որ զինքը սի-րով ընդունեցաւ: Պատեհ առիթ մը գտաւ գրգուելու հայերը Միհրդատայ դէմ, և ա-պա գնաց Վրաստան հօրը բով հաշտուե-լու պատրուակաւ և բռնադատեց զՓարս-ման պատերազմ բանալու: Միհրդատայ դէմ և զօրութեամբ տիրելու Հայոց: Հայ-ը չկրցաւ զիմազդել որդուն յախուռն զաղափարին: Հրատարակուեցաւ պատե-րազմ անհիմ պատճառանքով: Հոռամիզդ բազմաթիւ զօրցերով արշաւեց Հայոց աշ-խարհն: Միհրդատ անպատրաստ ըլլալով նահանջեց թշնամիէն, և պաշարուեցաւ խոռնիս բարձրագիր բերդին մէջ: Հոռվ-մայեցի զօրավարը ոչ միայն չօգնեց Մի-հրդատայ, այլ կաշտարեկ ըլլալով Հոռա-միզդէն ստիպեց զՄիհրդատ հաշտութիւն խնդրելու իր թշնամիէն: Հրամիզդ կը խոս-տանայր չմեռցնել զինքը ոչ սրով և ոչ դեղով և կը կոչէր զինքը հայր և աներ, բայց հազիւ Միհրդատ ամրոցէն ելաւ խա-զաղութիւնն հաստատելու համար, Հոռա-միզդայ դաւանքով կապերտներու ներքե-զինքը հեղծուցին և սպաննեցին որդիքը:

Հոռվմայեցից լսեցին իրենց պաշտպանեալ նիզակակցին դաւաճանութեամբ անարդ մահը, բայց անպատուհաս թողուցին ո-ճիրը. բարւոք համարեցան Հոռմիզդի թա-գաւորութիւնը, որովհետեւ քան զարդա-րութիւն մեծարոյ ունեցան սկզբունքս: «Քող տիրեացէ Հոռամիզդ, բայց ատեցեալ և անփառունակ: առաւելագոյն է մեծ ան-տի օգուտ քան թէ փառօց տիրանայր»:

Վողոգէս Պարթևաց թագաւորը պատեհ առիթ առաւ այս փոփոխութիւնս՝ թագա-ւորեցնելու Հայոց վրայ իր Տիրիթի եղ-րայրը: Բազմութեամբ զօրաց զիմեց Հա-յաստան, տիրեց Արտաշատ և Տիգրանա-կերտ բազմամարդ քաղաքաց: բայց մա-շարայական համաճարակին ըրած մեծ կո-տորածէն բռնադատուած, որով զօրցերը կը մեռնէին, զարձաւ իւր աշխարհը: Հոռ-միզդ անզամ մը փախստական Պարթև զօրութենէն, երբ Հայոց երկիրն գտաւ անպաշտպան զարձաւ նորէն իրեկ թա-գաւոր, անխակալութեան տեղ՝ բռնու-թիւն ցոյց տուաւ, որուն համար «Հայը՝ թէպէտ և սովորեալը ի ծառայութիւն» չհանդուրժեցին իրեն, և պաշարեցին ար-քոնիքը: Այլ միջոց չմնաց Հոռամիզդը, բայց եթէ փախստական կեանքը ապրեցը-նել: Երբ երկիւլը պատեց զինք փախս-տան միջոց, որ կընար ինկնալ թշնա-մեաց ձեռքը, Զենորիս կնոջ պատճառաւ, զարկաւ սուրով և ձգեց զայն Երասխայ մէջ և ինքը հալածական զնաց իւր հօրը բով: Երասխայ ալիք զԶենորիս ձգեցին գետեզերը, ուր զիւզացից խնամելով ա-պրեցուցին զինքը և տարան Տիրիթի, որ սիրով ընդունեցաւ և պահպանեց զինքը շշխոյարար:

Հոռվմէական կայսրութիւնը խորամանկ թագուելոյն ձեռօք անցաւ Անենեկայի ա-չակերտին՝ Ներոնի, որ կը թուէր թէ նոր դար մը պիտի կազմէր: Պարթևաց յաղթա-նակներու շոխնդն հասեր էր Հոռվմ: Հոռ-միզդ գրեաթէ հալածական էր, և հոռվ-մէական ազգեցութիւնն Հայաստանի վրայ կը սկսէր կորուանել: Ներոն չհանդուր-ժեց այս հանգամանաց, փութով հրամա-

յեց պատրաստել լեզոններ և արշաւել Պարթիաց հպատակ երկիրները։ Սահմանուեցաւ փոքր Հայաստանը Արխտարուդոսի, յանձնուեցաւ Երովաց գաւառը Սոհեմայ, և հրամայուեցաւ Եփրատայ վրայ ձգել հաստամուր կամուրջներ։ Կուաղրատոս և Կորրուլոն զօրավարներ պիտի առաջնորդչին հոռվմէացի բանակին։ Կորրուլոն պիտի պահպանէր Հայոց աշխարհը, և հրաման ելեր էր ծերակուտէն ամենայն նիզակակից թագաւորներուն պատրաստ գտնուելու զօրապետի ձայնին։ Յառաջազոյն անցաւ կուաղրատոս Ռւամիտիս Ասորուց Երկրէն կիլիկիա, ուր և Կորրուլոն ժամանեց։ Երկու զօրապետներս առաջարկեցին միաբանութեամբ Վողովէսի, որ ընտրէ խաղաղութիւն քան պատերազմ և զգուշացուցին կուոյ հետեւն ցններէն։ Վողովէս տեսաւ որ չունի մեծ պատրաստութիւն մը և վարդան որդին ալ ապօստամբը է իրմէն, ջանաց հին բարեկամական դաշնադրութիւնը վերանորոգել, ուստի զրկեց պատաններ առ Հոռվմէացիս այն պարթե ազատորեարը, որոնցմէ կը խիթայր թէ ապագային պիտի թշնամանային իւր դէմ։ Թէն Հոռվմէացւոց և Պարթիաց մէջ կոռւեցաւ խաղաղութեան դաշինը մը. բայց Հայաստանի նկատմամբ չսահմանուեցաւ ինչ, և պատերազմի թշնամութիւնը կը շարունակուէր։ Տիրիթ՝ նախանձայոյգ իւր թագաւորական գահուն կ'ուզէր ընդդիմանալ Հոռվմայեցւոց, ուստի շատ անզամներ յանկարծակի յարձակութերով կը նենէր Հոռվմէական բանակը։ Կորրուլոն կը ջանայր իւր ախոյեանը ընդպարձակ դաշտի վրայ պատերազմի բըռնադատել, այլ նա պարթեական փախրատեամբ և մերթ ընդ մերթ սարաւանդներու վրայէն սուրալով կը յոգնեցնէր քաջարի զօրապետը։ Կորրուլոն հրամայեց Անտիոքոս թագաւորին և Փարամանայ՝ Վրաց թագաւորին դիմելու Հայոց վրայ. իսսիցացիք և Հոռվմէացւոց դաշնակիցներ սկըսան խաղալ Հայաստանի լերանց վրայ։ Տիրիթ՝ ամէն կողմէն յարձակութե կրելով կարելի չէր որ երկար ժամանակ տեէր

տոկար թշնամւոյն դէմ. այլ չուզեց իրբե պարտեալ խոնարհիլ անոր. ուստի բանակցութեան մտաւ հոռվմէացի զօրավարին հետ, և ցոյց տուաւ՝ որ վողովէսի դաշնադրութեան համեմատ ինքը կը տիրէր Հայոց «իրաւամբը և ոչ բռնութեամբ» և միանգամայն կը սպառնայր, որ «ոչ պակասին Ողբակունեաց ոչ քաջութիւն և ոչ յաջողութիւն, ցուցեալ բազում անզամ տուժիւց Հոռվմէացւոց», Պարթիաց քաջութեան անունը կրնար նորէն հոչակուիլ կորրուլոն իմաստուն խոհեմութեամբ խորհուրդ տղւաւ Տիրիթայ, որ իր թագաւորութեան հաստատութիւնը խնդրէ ինքնակալէն։ Տիրիթ չխոնարհեցաւ առաջարկիս և իւր ասպատակութիւնը շարունակեց։ Հոռվմէացի զօրապետն ոչինչ նուազ խորագէտ՝ ջանաց բռնադատել զջիրիթ ճակատ առ ճակատ կոռւելու, ուստի յարձակեցաւ ամուր բերդերու վրայ, առաւ շատերն, աւերեց և քանդեց, դիմեց Վոլանդ ամրոցն քարուքանդ ընելու համար և ապա Արտաշատի վրայ արշաւեց։ Կորրուլոն տիրեց ասոր ալ, այրեց և հիմնայտակը ըրաւ բազմամարդ անուանի բաղարս։ Երբ Հոռվմէ լսուեցան յաղթութիւնը՝ ողջունուեցաւ ներոն յաղթական կայսր ինքնակալ. ծերակուտին վճռով կատարուեցան զոհութեան զոհեր և շինուեցաւ յաղթական կամարներ և անդրիներ։

Կորրուլոն շարունակից իւր շահատակութիւնը և միանգամայն խորամանկութիւնը, կ'ուզէր տիրել Տիրապանակերտի։ Անզամ մը ճանչնալէն վերջ հայերը իւրեւ յողողդ բնոյրով, յոյլ վասենաց մէ։ և հատադրութ պատեն ասիրներու ատեն՝ օգուովի ջանաց այս իրենց թերութիւններէն։ Երբ Մարգեաց գաւառին անցած միջոց բնիկներէն կրեց նեղութիւններ, զիրենց պատժելու համար հրապուրեց Վրացիները դիմել ասոնց վրայ։ — Տիգրանակերտ՝ սարսափելով հոռվմէական ահեղ բանակին պատրաստութենէն անձնատուր եղաւ։ Տիրիթ թէպէս փութաց մայրաքարեց փրկել Մարտասանի կողմէն հասներով օգնութեան, այլ ժամանակէն ուշ

հասաւ, և յուսակորոյս զարձաւ իր ասպատակութեանց :

Ներոն թագաւորեցուց Հայոց զԾիգրան՝ կապադովկացւոց Արքեղայոս թագաւորին թոռը, որուն իրոնարհեցան ժողովրդեան մեծամասնութիւնը : Սա կորրուլոնի օգնութեամբ Ասորիցէն մոտաւ Հայաստան և տիրեց ժամանակ մը աշխարհին և մինչեւ տնզամ սկսաւ ասպատակել Աղիարենաց սահմանները :

Վողոգէս Պարթեաց թագաւորը կ'ուզէր Հոռվմայեցոց հետ պահել խաղաղութեան դաշինքը: բայց իւր դէմ սկսան բողոքել Մոնորազ իշխան և իւր Տիրիթ եղբայր, որ իւր յուկովեամբն կորուսին Հայաստան և պիտի կորսնցնէին դեռ ևս այլ աշխարհներ: Վողոգէս՝ չէր կրնար անտարբեր մեալ այս դէպքերուս, կոեց վըրկանաց հետ հաշտութեան դաշինքը: կարգեց Տիրիթ եղբայրն վերստին Հայոց թագաւոր, որ կը համարուէր « երրորդ իշխանութիւն պետութեան » Պարթեաց, անհամար բազմութեամբ զօրականի և Աղիարենաց օգնական բանակով դրկեց Հայաստան, իսկ ինքը պատրաստուեցաւ մեծ զօրովեամբ դիմել և յարձակի Հոռվմէցւոց վրայ: Վողոգէս մոտաւ Հայաստան, Տիրիթ պաշարեց Տիգրանակերտն, ուր ապաստաներ էր Տիգրան:

Կորրուլոն հոռվմէական լակոնաբանութեամբ պատգամաւորներ դրկեց առ Վողոգէս յարգելու դաշնադրութիւնը և սպառնացաւ իւր լեզունները ուղղել Պարթեաց վրայ: Վողոգէս թէկ երկմտեցաւ սակաւիկ ինչ, այլ թշնամոյն ահաւոր զօրութենէն ընկրկելով ջանաց պատերազմի կոտորածներուն վերջ տալ. ուստի առաջարկեց հոռվմէացի զօրապետին, որ Տիգրան մեկնի Հայաստանի սահմաններէն, և ինքը դրկէ պատգամաւորներ առ ինքնական խնդրելու Հայոց թագաւորութիւնը Տիրիթի համար: Թէկ զիջաւ կորրուլոն և Վողոգէսի պատգամաւորները զնացին Հոռվմ, այլ ունայնաձեռն զարձան ասոնց և ծերակոյտը սահմանեց Հայաստանի պաշտպանութեան համար դրկել կեսեննիոս

Պետու զօրապետը առանձին զօրաբաժն նով:

Վողոգէս խորհեցաւ յարձակի միկնոյն ժամանակ Ասորեաց և Հայոց աշխարհին վրայ և Հոռվմէական երկու բանակներն խորտակել, այլ զիտնադրով կորրուլոնի անուուաճելի արութիւնը՝ կեղրոնացուց զօրովութիւնը Պետոսի դէմ: կրեցին հոռվմէական լեզունները մեծ պարտութիւն մը Պարթեներէն, Պետոսի ինդրեց օգնութիւն կորրուլոնէ, որուն աճապարեց քաջամարտ զօրապետն հասնիլ օգնութեան, այլ նա արսափահար՝ մատնուելու Պարթեներու ձեռքը և յուսահատ օգնութեան ժամանելուն, դաշնադրեց Պարթեաց հետ, թողուց անոնց Հայոց աշխարհին բերդերը և ամրարանոցները և ինքը մնացած պարտուած քանակովն անցաւ կապագովկիա ձմերելու հոն: Ցիսուր էր Կորրուլոնի և Քետոսի տեսութիւնը, բայց պէտք էր յարգել պարտելոց կոած դաշը: կորրուլոն չէր հանդուրժեր այնչափ ժամանակի իւր քաջարութեանց սապարէզն ամօթալի պարտութեամբ թողուլ, ուստի դրկեց պատգամաւորներ Վողոգէսի հեռանալ Հայոց աշխարհէն և Պարթեաց պահակապաններ չթողուլ հոն: Պարթե թագաւորը, իւր ափոյեանին հաստատամտութենէն վախցած՝ կառաջարէս ըստ վաղեմի բաժանման՝ Երփրատն ըլլալ երկու ինքնակալութեանց անջրպետ, մինչեւ իւր պատգամաւորներն երթան Հոռվմ ստանալու կայսեր և ծերակուտին հաւանութիւնը Տիրիթի Հայոց վրայ թագաւորելուն նկատմամբ: Պայմաններս երկու կողմանէ ընդունելի եղան և մնաց այս միջոցին Հայաստան անիշխան վիճակի մէջ: —

Պարթե հրեշտակներն հասան Հոռվմ: աւագանին և Ներոն չզիջան խաղաղութեան այն պայմաններուն, որ Վողոգէսի պատգամաւորը ներկայացնեցին ինքնակալին, սահմանուեցաւ զօրապետ կորրուլոն և հրատարակուեցաւ պատերազմ: Դարձան ետեւ պատգամաւորը իրենց բերած ընծայներով և միայն այսչափ ինչ զիջումն շնորհուեցաւ, որ եթէ Տիրիթ ան-

ձամբ Հռովմ երթայր և խնդրէր կայսրէն
 Հայոց թագը՝ պիտի չմերժուէր իրեն :
 Կորրուղոն հաւաքց լեզունները Մելիդինէ
 և սկսաւ յառաջ խաղալ Տիրիթ և Վո-
 դողէս աղաջաւորներ զրկեցին իրեն խաղա-
 ղութեան համար, որոնց պատասխանեց
 Հռովմայեցի զօրավարը, թէ որպիտի վա-
 սակար հետեւանքներ պիտի ունենար եր-
 կու ինքնակալութեանց համար, ուստի ի-
 մասուութեամբ խորհուրդ կուտար խոնար-
 հելու կայսերական առաջարկին դիմաց:
 Առաջարկուեցաւ զինադուց, կատարուե-
 ցան բանակցութիւնը. յանձն առաւ յո-
 խորտ Պարթէն իննդրելու արքունական թա-
 զը Հռովմայ մէջ ինքնակալէն: Բայց նախ
 սահմանուեցաւ կատարել թագաղորութեան
 հանդէսը Հռովմէական լեզունաց հանդէպ:
 Եթեղ արդուզարդով զրուեցաւ ինքնակա-
 լին պատկերը, որոն առջև զետեղեցին
 Հայոց թագը: Կորրուղոն բոլոր բանակին
 առջն պատկեց զԾիրիթ և ասպա խրախու-
 թեամբ բաժնուեցան իրարմէ:

Տիրիթ ինդրեց հրաման անգամ մ'ալ
 երթալ տեսնելու մայրը, եղայրները. թո-
 ղուց պատանդ Հռովմէացւոց քով իր զուս-
 տրը, զրկեց աղերսապիր առ ներոն կայսր
 և ասպա ինքն առ ուղեկորեցաւ դէպ ի Հռոմէ:

Հոս կը լոէ ճարտարաբան պատմազրի
 վէլը Հայոց նկատմամբ, ժլատ ժամանակը
 մեզ սակաւ ինչ կը հազորդէ Տիրիթի կենաց
 այլ պարագայններու մասին. բայց այլչափ
 ինչ ծանօթ է, որ ներոն իւր կայսերա-
 կան նոխութեամբ մեծածախ հանդէսներով
 կը կատարէ թագաղորութեան հանդէսը
 Հռովմայ մէջ և գուցէ կ'ընդունի Հայոց
 թագաւորէն և այլ թանկագին ընծաններ,
 որոց մէջ կը նշանակուին արդի պատմիչ-
 ներէն այն գեղեցկարուեատ ձուլածոյ ե-
 րիվարներն, որ մինչև ցայսօր Հռովմ կը
 պարծի անոնց հնութեամբ: Հետախոյզ
 ըննաբանն Տիրիթի պատմութենէս օգ-
 տուած կ'ենթազրեն մեր պատմահայրն
 Խորենացի, և վերագրած Մեծին Տրդա-
 տայ թագաւորին, բայց չունինք հաստա-
 տութիւն այս կարծեաց զօրաւոր պատ-
 մական ապացոյցիր:

ԱՐԵՒԱՊԱՇՅՈՒԹԵՒՆ

ԵԿ

ԿՐԱԿԱՊԱՇՑՈՒԹԻՒՆ

Ա.

Աստուած բառը մեր լեզուին մէջ գի՞ն,
 շատ հին գործածութիւն մը ունի:

Դժբախտաբար՝ հակառակ մեր երկա-
 րատե ջանից՝ չկարողացանք ստուգարա-
 նել այս բառը, չե՞նք ալ զիտեր թէ ո՞ր
 լեզուն փոխառութիւն ըրած ենք ուղղա-
 կի: Հ. Ղեռնդ Ալիշան և Մ. Էմին զա-
 նազան բացատրութիւններ տուած են առ
 այս, սակայն արդար ըլլալու համար ը-
 սենք թէ իրենք իսկ գոհ չե՞ն մնացած
 բառ մենային այդ կարծիքներէն:

Իրօք ինչպէս զիտել կու տայ, Հ. Ղ. Ա-
 լիշան, «Հաստող», «Վաստածող» երկու
 նպատակայարմար բառեր են ասառածու-
 թեամբ մը գաղափարը արտայայտող, սա-
 կայն պէտք է զիտել որ ասոնց և Աստուած
 բառին միջն նմանութեան եզրեր չեն գրու-
 նուած:

Եթէ «Ազգուած» ընդունինց ինչպէս ի-
 րաւամբ կը զիտէ «Հին Հաւատը»ի հե-
 ղինակը, բացարձակապէս սխալած պիտի
 ըլլանք. վասն զի Ազգուած կրաւորական
 է, ուրիշէ մը ազգուած, ներգործուած կը
 նշանակէ, բան մը որ ներգործող Աստու-
 ծոյ մը գաղափարը չարտայայտեր բնա-
 ւին, մինչդեռ բովանդակ մարդոց ըմբռնու-
 մով Աստուած պէտք էր ներգործական ըլ-
 լար փոխանակ կրաւորականի:

Շահնազարեան կարապետ Վարդապետ՝
 Աստուած՝ լուսեղին էակ կը ստուգարանէ,
 չե՞նք զիտեր թէ հմուտ վարդապետը ո՞ր-
 չափ մօտեցած է ճշմարտութեան:

Հնդիկ զիցարանութեան մէջ «Աստուա-
 թա» անուն ծառ մը կայ, որոն արմատը
 երկնքի. մէջ տարածուած է. ոմանք այն-
 պէս կը նկատեն որ մեր Աստուած բառը
 սոյն Աստուաթային հետ ուղղակի աղերս
 ունի, սպասելով որ լեզուարանութիւնը և
 բանասիրութիւնը իրենց վերջնական խօս-